



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՌԻՉԱՐԸ ՔԱՐՈԼԱՆ ԿՐՏՍԵՐ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԸ ԱՅՅԵԼԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Ազգային բարերար Ռիչըրտ Գարուլան Կրտսեր Երեքշաբթի, 19 Փետրուարին այցելեց Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Չաւակը՝ մեծանուն բարերար հանգուցեալ Ռիչըրտ Գարուլանի, իր կողքին ունէր իր ազնիւ Տիկինն Քիմպըրլին, ու երկու դեռատի դուստրերը:

Ռիչըրտ Գարուլան Կրտսեր առաջին անգամ ըլլալով է որ կ'այցելէր Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքը, անոր վերակառուցումէն ետք: Ան Առաջնորդ Սրբազանին փոխանցեց իր մօր՝ Տիկին Թինա Գարուլանի ողջոյնները, ծանօթացաւ շէնքի տարբեր բաժանմունքներուն ու աշխատանքի մարզերուն, եւ իր հիացումին կողքին՝ շնորհաւորութիւնները փոխանցեց Առաջնորդ Սրբազանին, ծրագիրին ամբողջացման առիթով:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Գարուլան ընտանիքին բարերարութիւնները, որոնք կը տրամադրուին Ազգային Առաջնորդարանիս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու ազգային կազմակերպութեանց ու Հայ Դատին: Ան յանուն մեր Թեմի ժողովականութեան՝ երախտագիտութիւն յայտնեց բարերար ընտանիքին, որ Առաջնորդարանի նոր շէնքի գլխաւոր բարերարներէն մէկն է:

Առաջնորդ Սրբազանը նախաճաշով հիւրասիրեց յարգելի հիւրերը, ապա յուշանուէրներ տուաւ անոնց:

Յիշեցնենք, որ Տիկին Թինա Գարուլան անցեալ Մարտին այցելած էր Ազգ. Առաջնորդարան եւ ծանօթացած էր անոր բաժանմունքներուն ու յարկին տակ տարուող աշխատանքներուն:

BENEFACTOR RICHARD CAROLAN JR. AND FAMILY VISIT THE WESTERN PRELACY

On the morning of Tuesday, February 19th, Mr. Richard Carolan Jr., accompanied by his wife Kimberly and two daughters, visited the Western Prelacy where he was welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Mr. Carolan is the son of the late Prelacy benefactor Mr. Richard Carolan and Mrs. Tina Carolan, who visited the Prelacy last March.

During his first visit to the headquarters since the renovation, Mr. Carolan became more closely acquainted with the various departments and activities of

the Prelacy, congratulated the Prelate on the successful realization of the building project, and conveyed his mother's well wishes to the Prelate.

The Prelate highly commended the Carolan family for their enduring benefaction to the Prelacy, the Catholicosate of the Great House of Cilicia, various Armenian organizations and the Armenian Cause, and expressed his gratitude to the family, who are also one of the grand benefactors of the building, on behalf of the larger Prelacy family

The Prelate also hosted the family to breakfast and presented them with a memento prior to their departure.